

<<Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի տնօրեն պարոն Յուրա Սուքասյանին

<<ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-ի 2022թ-ի ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<<Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ>> ՊՈԱԿ-ի գրադարանի գործունեությունը ընթանում է կանոնակարգված, ինչպես նաև քոլեջի աշխատանքների, ուսումնական պլանների և ծրագրերի հետ սերտ համագործակցված: Գրադարանի հիմնական այցելուները ուսանողներն են, որոնք օգտվում են գրադարանի ինչպես հանրակրթական դասագրքերից, այնպես էլ մասնագիտական, ուսուցողական և գեղարվեստական գրականությունից: Գրադարանի այցելուներից են նաև աշխատակիցները: 2022թ. գրադարանը համալրվել է հանրակրթական առարկաների թվով 80 դասագրքերով, որոնք ձեռք է բերվել Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի միջնորդությամբ.

1. Հայոց լեզու /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսքերի համար/ 11- 20 հատ
2. Հայ գրականություն /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսքերի համար/ 11 - 20 հատ
3. Հասարակագիտություն - 20 հատ
4. Հայոց պատմություն /ընդհանուր և բնամաթեմատիկական հոսքերի համար/ 11- 20 հատ:

Տարվա ընթացքում գրադարանային ֆոնդը համալրվել է նաև ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից թողարկված մասնագիտական 6 ուսումնական ձեռնարկներով:

Ինչպես ամեն ուսումնական տարվա ավարտին և սկզբին, այս տարի ևս շրջանավարտները ներկայացրեցին շրջիկ թերթիկ, իսկ ընդունվածների համար բացվեցին անվանական քարտեր՝ գրադարանից օգտվելու համար: Գրադարանի աշխատանքները համակարգվում է նաև Դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի կողմից բացված էլեկտրոնային հարթակում:

Գրադարանավար՝ *Ա. Աղուրյան* Ա. Աղուրյան

2023թ. ք. Մարտունի